ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2012թ. N 500

ք. Արմավիր

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի „բ" ենթակետով, 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 1368-Ն որոշումը, 2012 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում կրթական ծրագրերի ուսուցման գծով ծառայությունների իրականացման նպատակով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության 2012 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին <<Տարրական ընդհանուր կրթություն>> ներառական կրթություն ծրագրի տնտեսագիտական դասակարգման <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածով նախատեսված 12523800/ տասներկու միլիոն հինգ հարյուր քսաներեք հազար ութ հարյուր / դրամ գումարը,, << Հիմնական ընդհանուր կրթություն>> ներառական կրթություն ծրագրի տնտեսագիտական դասակարգման <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածով նախատեսված 8161700 /ութ միլիոն մեկ հարյուր վաթսունմեկ հազար յոթ հարյուր/ դրամ գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության թվով 2 հանրակրթական դպրոցներին աշակերտ թվերին համապատասխան բաշխել համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին (Փ. Կարապետյան) սահմանված կարգով իրականացնել պայմանագրերի կնքումը և համապատասխան գումարների փոխանցումը հանրակրթական դպրոցների հաշվեհամարին :
3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2012 թվականի դեկտեմբերի 15 -ի
N 500 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2012Թ ՃՇՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ

2012թ. ներառական ուսուցման բյուջեն

h/h	Դպրոցի անվանումը	Ընդամենը	09.01.02.04 ներառական կրթություն տարրական մակարդակում	09.02.01.05 ներառական կրթություն հիմնական կրթության մակարդակում
1	2	14		
1	Արմավիրի թիվ 5 հիմն.դպր	17295.3	9904.1	7391.2
2	Վաղարշապատի թիվ 7 հ/դ	3267.8	2497.3	770.5
	ընդամենը	20563.1	12401.4	8161.7

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆ.ՀԱՐԱՊԵՏՅԱՆ